ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
«ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/9» ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք. Երևան

01.10.2019թ.
ժամը՝ 11:00

Հանձնաժողովի նախագահ՝
«Ծաղկահովիտի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի
Բուժական գծով փոխտնօրեն (հանձնաժողովի նախագահ)՝ Սանոսյան Ջիվան

Անդամներ՝
«Ծաղկահովիտի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի
Գլխավոր հաշվապահ (գնահատող)՝ Ավետիսյան Դիանա

«Ծաղկահովիտի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի
Հաշվետար (գնահատող)՝ Հայրապետյան Վեռա

«Ծաղկահովիտի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի
Տնտեսվար (բացող)՝ Վարդանյան Ռուբեն

«Ծաղկահովիտի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի
թերապևտ (բացող)՝ Հունանյան Միհրան

Հանձնաժողովի քարտուղար՝
«Ծաղկահովիտի առողջության կենտրոն» ՓԲԸ-ի
գնումների գծով փորձագետ՝ Ասատրյան Ռոզա

1. «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/9» ծածկագրով մրցույթի հրավերի պահանջներին համաձայն որակավորման պահանջները հիմնավորող փաստաթղթերը գնահատելու մասին

1.1 Համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրած տեղեկատվության, «Միդա Թրեյդ», «Նատալի Ֆարմ» և «Արֆարմացիա» ՍՊԸ-ները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:

1.2 Գնահատող հանձնաժողովը բավարար գնահատեց ընթացակարգի առաջին տեղ գբաղեցրած մասնակիցների՝ «Միդա Թրեյդ», «Նատալի Ֆարմ» և «Արֆարմացիա» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հրավերով նախատեսված հիմնավորող փաստաթղթերը և ապրանքի տեխնիկական բնութագրի համապատասխանությունը հրավերով նախատեսված պահանջներին, որը արտացոլվեց նախապես տրամադրված գնահատման թերթիկներում:

1.3 «Միդա Թրեյդ», «Նատալի Ֆարմ» և «Արֆարմացիա» ՍՊԸ-ները հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չեն գնումների գործընթացին մասնակցություն չունեցող անձանց ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

2. «ԾԱԿ-ԳՀԱՊՁԲ-19/9» ծածկագրով մրցույթի գնահատման արդյունքների հաստատման (մրցույթի արդյունքների ամփոփման) մասին

<u>Հանձնաժողովը որոշեց.</u>

2.1. «Ծաղկահովիտի առողջության կենտրոն» ՓԲԸ–ի կարիքների համար դեղորայքի ձեռքբերման նպատակով կազմակերպված գնանշման հարցման գնման ընթացակարգի՝

- **1-ին** չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել «Միդա Թրեյդ» ՍՊԸ-ին:
- **3-րդ, 14-րդ, 28-րդ, 29-րդ և 31-րդ** չափաբաժինների մասով՝ «Արֆարմացիա» ՍՊԸ -ին:
- **2-րդ, 4-6-րդ, 11-13-րդ, 17-րդ, 19-րդ, 21-27-րդ, 32-րդ և 34-րդ** չափաբաժինների մասով՝ «Նատալի Ֆարմ» ՍՊԸ-ին:

2.2 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 15-րդ, 30-րդ չափաբաժինները հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:

2.3 Հաստատել ԳՀ ընթացակարգով պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.4 Մասնակցի հետ համապատասխան չափաբաժնի մասով կնքել պայմանագիր՝ անգործության ժամկետի ավարտից հետո:

2.5 Սույն ընթացակարգի համար «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.6 Պայմանագիր կնքելու նպատակով ընթացակարգի ընտրված մասնակցին անգործության ժամկետի ավարտից հետո առաջարկել 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի ապահովում կնքվելիք պայմանագրի 10 (տասը) տոկոսի չափով՝ միակողմանի հաստատված հայտարարություն՝ տուժանքի կամ կանխիկ փողի, կամ բանկային երաշխիքի ձևով, որը ներկայացնելուց հետո սահմանված կարգով կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5, դեմ-0

3. Հանձնաժողովի անդամների ստորագրություն՝

Նախագահ՝	Սանոսյան Ջիվան	ԳՊ/ԳԱՊ	
Անդամներ՝	Ավետիսյան Դիանա	ԳՊ/ԳԱ	
	Հայրապետյան Վեռա	ԳՊ/ԳԱ	
	Վարդանյան Ռուբեն	ԳՊ/ԲԱ	
	Հունանյան Միհրան	ԳՊ/ԲԱ	
Քարտուղար՝	Ասատրյան Ռոզա	ԳՊ/ՄՀմ	